ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Կատարող՝ Հասմիկ Հովհաննիսյան

Առարկա՝ Երաժշտություն

Ուսումնական հաստատություն՝

ՀՐԱԶԴԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....22

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....24

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժը առհասարակ զբաղվում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներով: Այնուհետև առանձնացնում ենք մանկավարժի մասնագիտական կողմնորոշման գործունեության հիմնական գործառույթները, խնդիրները, աշխատանքի հիմնական ուղղությունները, ինչպես նաև այն բոլոր մեթոդները և սկզբունքները, որոնց միջոցով և կիրառմամբ ապահովվում է մանկավարժի գործունեության արդյունավետությունը:

Աշխատանքի սահմաններում անդրադառնում ենք մասնագիտական ընտրության հարցին հիմնական դպրոցական տարիքում: Հիմնականում հենց այդ տարիքում է տեղի ունենում մասնագիտական ինքնորոշումը: Որպեսզի մանկավարժը արդյունավետորեն կազմակերպի իր լուսավորչական, ախտորոշիչ, խորհրդատվական, դաստիարակչական, կազմակերպչական բնույթի աշխատանքները, պետք է տիրապետի ավագ-դպրոցականի տարիքային, անհատական, հոգեբանական, ֆիզիոլոգիական, սեռային առանձնահատկությունների, շրջապատի (ծնողներ, մանկավարժներ, ընկերներ, այլ հեղինակություն ունեցող անձիք) հետ հարաբերությունների կառուցման առանձնահատկությունների մասին գիտելիքներին: Շատ կարևոր է իմանալ նաև սոցիալականացման առանձնահատկություններն այդ տարիքում և տարիքին բնորոշ այնպիսի նոր երևույթների դրսևորումները, ինչպիսիք են մասնագիտական ինքնորոշումը և կենսական պլանների կառուցումը: Վերջիններս բնականաբար ունեն իրենց և հաջողության պայմանները, և դժվարությունները, որոնք անպայման պետք է հաշվի առնել մասնագիտական կողմնորոշում իրականացնելիս: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքի բովանդակությունը՝ իր փուլերով և ենթափուլերով, թե որ փուլում ինչ խնդիրներ են լուծվում, ինչ կոնկրետ աշխատանքներ են տարվում: Այսինքն՝ մասնագիտական կողմնորոշումը իրենից ներկայացնում է մի ամբողջական համակարգ, և այն կարող է հաջողության հասնել, երբ հետևողականորեն լուծվում են այդ համակարգի մեջ մտնող բոլոր խնդիրները: Այնուհետև խոսվում է պրոֆեսիոգրամների, դրանց կազմման անհրաժեշտության, նշանակության և կառուցվածքի մասին: Պրոֆեսիոգրամները մասնագիտական կողմնորոշման առումով բավականին նպատակահարմար են, և մասնագիտական կողմնորոշում իրականացնող ցանկացած մասնագետ, այդ թվում նաև մանկավարժը, պետք է շատ լավ տեղեկացված լինի պրոֆեսիոգրամների և դրանց կիրառման առանձնահատկությունների մասին: Հետազոտական աշխատանքների շարադրմանը:

Հետազոտական աշխատանքների ժամանակ կիրառվել են մեթոդները:

Սույն աշխատության միջոցով փորձ է արվում ուշադրություն սևեռել վերոնշյալ խնդիրների վրա:

Մեր աշխատանքի հետապնդում է 2 կարևորագույն նպատակ:

1. Ցույց տալ, որ մանկավարժը ևս իրավասու է զբաղվել մասնագիտական կողմնորոշման աշխատանքներով /ոչ թե իրավասու է այլ դա նրա հիմնական գործառույթներից է: Տես Նիկիտինա Սոց. մանկավարժական մեթոդներ ու տեխնոլոգիաներ/: Այս նպատակադրումը առաջին հերթին բխում է այն օբյեկտիվ հանգամանքից, որ այսօր համարվում է համեմատաբար նոր, հատկապես Հայաստանում: Ուստի այն դեռ խնդիր ունի ամրապնդելու իր դիրքերը գործունեության բոլոր այն բնագավառներում, որտեղ մինչ այսօր զբաղվել և զբաղվում են այլ մասնագետներ, որոնք զուցե և իրենց մասնագիտական պատրաստվածության մակարդակով, գիտելիքներով, կարողություններով չեն համապատասխանում այդ աշխատանքների կատարմանը:

2. Ընդգծել մասնագիտական կողմնորոշման կազմակերպման անհրաժեշտությունը, դերն ու նշանակությունը անձի ձևավորման, զարգացման և սոցիալականացման, ինչպես նաև, հասարակության համար:

Նշված նպատակները ենթադրում են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ համապատասխան գրականություն:

2. Պարզել, թե ինչպես է առնչվում մասնագիտական կողմնորոշումը մանկավարժի գործառույթների հետ և ինչ մեթոդներով ու տեխնոլոգիաներով են կազմակերպվում այդ աշխատանքները:

3. ՈՒսումնասիրել մասնագիտության ընտրության երևույթը դպրոցական տարիքում՝ որպես մարդու կյանքի վճռորոշ փուլ:

4. Ներկայացնել այն աշխատանքների բովանդակությունը, որոնք իրականացնում է մանկավարժը դպրոցականների մասնագիտական կողմնորոշման նպատակով:

5. Իրականացնել հետազոտություն դպրոցականների հետ պարզելու նպատակով, թե որքանով է նրանց մոտ ձևավորված մասնագիտական մտադրությունը և ինչ գործոններով է այն պայմանավորված: Բացահայտել մասնագիտական կողմնորոշում չստացած պատանիների սխալ մասնագիտական ընտրության հետևանքները:

6. Աշակերտների շրջանում պարզել ինչպես և որքան է փոխվել նրանց վերաբերմունքը, հետաքրքրությունը իրենց մասնագիտության նկատմամբ, ինչ գործոններով է պայմանավորված այդ փոփոխությունը:

Հետազոտության վարկածը. հիմնական դպրոցում մասնագիտական կողմնորոշման գործընթացի արդյունավետ զարգացումը հնարավոր է, եթե. 1. Գիտականորեն ուսումնասիրվեն հիմնական դպրոցում

6 մասնագիտական կողմնորոշման գործընթացում առկա խնդիրները, 2.Հիմնական դպրոցում համալիր կիրառվեն մասնագիտական կողմնորոշման բաղադրիչները, 3. Հիմնական դպրոցում մասնագիտական կողմնորոշումն իրականացվի սովորողների մանկավարժահոգեբանական տվյալների հիման վրա,

Հետազոտական աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Հետազոտական աշխատանքի բաղկացած է ներածությունից, բուն հյութից, եզրակացություններից օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է էջերի վրա:

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մանկավարժը այն մասնագետն է, որը դաստիարակչական աշխատանքներ է կազմակերպում երեխաների, երիտասարդների և մեծահասակների հետ սոցմշակութային տարբեր պայմաններում (ընտանիք, ուսումնական հաստատություն, նախադպրոցական հաստատություն, մանկապարտեզ, մանկատուն, աշխատանքային կոլեկտիվ, օժանդակ կրթության հաստատություն և այլն): Մանկավարժի պրակտիկ գործունեության խնդիրների շրջանակը շատ լայն ոլորտներ է ընդգրկում՝ սկսած երեխաների հետ անմիջական աշխատանքից, որոնք ունեն սոցիալականացման հետ կապված խնդիրներ, մինչև համագործակցումը սոցիալական կազմակերպությունների, սոցիալական ինստիտուտների հետ, որոնք մասնակցում են աճող սերնդի սոցիալական դաստիարակությանը: Սրանով էլ պայմանավորված է մանկավարժի բազմաթիվ մասնագիտացումների առկայությունը: [1]

Մանկավարժի խնդիրն է ուղղորդել և կառավարել անձի սոցիալականացման գործընթացը, որը ընթանում է տարբեր սոցիալական գործոնների և սոցիալական ինստիտուտների ազդեցությամբ: Սոցիալականացումը անհատի կողմից սոցիալական միջավայր ներգրավվելու երկարատև, անընդհատ և հակասական պրոցես է: Այն ենթադրում է գիտելիքների, պրակտիկ կարողությունների յուրացում, հարմարում հասարակության արժեքային համակարգին: Սոցիալականացման ընթացքում ձևավորվող անձնավորությունը յուրացնում է սոցիալական դերեր, կուտակում է կյանքի փորձ, ձեռք է բերում կայուն վարքագիծ:

Մեր աշխատանքի սահմաններում ուսումնասիրվում է մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները դպրոցականների հետ, որոնց սոցիալականացման հիմնական ասպեկտներն են.

- ուսման և իր հետագա կրթության նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը;
- կենսական պլանների գիտակցված ձևավորվում և մասնագիտական ինքնորոշման անհրաժեշտության գիտակցումը;
- կենսական արժեքների համակարգի վերամշակումը;

- մարդկանց հետ համագործակցության և փոխազդեցության դրական փորձի կուտակումը;
- քաղաքացիական դիրքորոշման, երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ձևավորումը:

Սրանք սերտորեն կապված են և փոխազդում են միմյանց հետ: Մանկավարժը մասնագիտական կողմնորոշման ծրագրերի միջոցով իր ներդրումն է ունենում դպրոցականների սոցիալականացման մեջ: Մասնագիտության ընտրությունը սոցիալականացման որոշակի փուլում հանդես է գալիս որպես վերջինիս նորմալ ընթացքն ապահովող հանգամանք: Ավագ դպրոցականների հետ մանկավարժի կողմից իրականացվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետությունը որոշվում է բազմաթիվ գործոններով, այդ թվում նաև նրա տեղեկացվածությամբ: Պրոֆկողմնորոշման ոլորտում մանկավարժի տեղեկացվածության հիմնական բաղադրամասերն են.

- մասնագիտությունների դասակարգման, աշխատանքի բովանդակության, մասնագիտության կողմից մարդուն ներկայացվող պահանջների մասին տեղեկությունների տիրապետումը;
- մասնագիտական կրթության ձեռքբերման ուղիները;
- ուսումնական կենտրոնների, միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների, ընդունելության պայմանների մասին տեղեկությունների տիրապետումը;
- ընդունելության կանոնների, մրցույթների, ցուցանիշների մասին տեղեկացվածությունը;

աշխատաշուկայի առանձնահատկությունների իմացություն (ներկայումս ի՞նչ մասնագիտություններ են պահանջված, հետագայում ո՞ր մասնագիտությունները ավելի մեծ պահանջարկ կունենան):[2]

- մանկական, դեռահասության, պատանեկան տարիքի առանձնահատկությունների իմացություն և այդ գիտելիքների գրագետ կիրառում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ կազմակերպելիս:

Հաջող գործունեության իրականացման պայման է մանկավարժների և հոգեբանների համագործակցությունը: Պետք է հստակորեն առանձնացնել յուրաքանչյուրի գործառույթները, ինչը հնարավորություն կտա ավելի գրագետ կազմակերպել պրոֆկողմնորոշման աշխատանքները: Այնուամենայնիվ աշխատանքը արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ բոլոր մասնագետներն աշխատեն միահամուռ կերպով: Մանկավարժի և հոգեբանի խնդիրն է միավորել և համակարգել բոլոր մանկավարժների, ընտանիքի, այլ շահագրգռված անձանց (այս կամ այն մասնագիտության ներկայացուցիչ), կազմակերպությունների ներուժը:

Հանրակրթական դպրոցում մասնագիտական կողմնորոշում իրականացնող մանկավարժի կարևորագույն խնդիրներից է մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բացումը, որոնց միջոցով էլ նա իրականացնում է իր մասնագիտական կողմնորոշման աշխատանքները: Կենտրոնի հիմնական խնդիրն է աշակերտներին անձնային զարգացման, ճիշտ սոցիալականացման, մասնագիտական կայացման և կենսական դիրքորոշման հարցում օգնություն տրամադրումը: Մանկավարժի աշխատանքը այս ոլորտում ևս շատ ընդգրկուն է՝ սկսած տարածքային սոցիալ-մանկավարժական ծրագրեր իրականացնելուց մինչև առանձին երեխային օգնության տրամադրում կապված նրա իրավունքների և հետաքրքրությունների պաշտպանության հետ:

Կենտրոնի հիմնական ֆունկցիան պրոֆկողմնորոշման ֆունկցիան է, որը ենթադրում է օգնել դպրոցականներին կատարել մասնագիտության հիմնավորված ընտրություն, որը բխում է թե անձնային հետաքրքրություններից ու շահերից, թե հասարակության պահանջմունքներից: Հանրակրթական դպրոցում մասնագիտական կողմնորոշման առանձնահատկությունն այն է, որ սովորողների հետ փոխազդեցությունը իրականանում է ուսուցման ողջ շրջանում, ինչն էլ պայմանավորում է նրանց մասնագիտական ինքնորոշման ղեկավարման հետևողականությունը և տարբերակված ու անհատական մոտեցումը:

Մասնագիտական կողմնորոշման գործընթացը մանկավարժական գրականության մեջ դիտարկվում է որպես անհատի մասնագիտական ինքնորոշման գիտական կառավարում և մասնագիտական գործունեության ընտրության դրդապատճառներ: Մասնագիտության ընտրության կողմնորոշումը ներառում է օպտանտի անձի համապարփակ հոգեբանական և մանկավարժական ախտորոշման իրականացում, նրա բազմակողմանի մասնագիտական իրազեկման և մասնագիտական կողմնորոշման ձևավորում: Հոգեբանական և մանկավարժական հետազոտություններն ապացուցել են, որ մասնագիտության կողմնորոշման մեջ հատկապես կարևոր է դպրոցական տարիքը, որի ընթացքում դրվում են անհատի մասնագիտական զարգացման հիմնարար հիմքերը, դրդապատճառների, հետաքրքրությունների, կարողությունների, բարոյական կողմնորոշումների, հարաբերությունների և վերաբերմունքի համալիր: Ձևավորվում են, որոնք հետագայում ձևավորում են արժեքային-մոտիվացիոն վերաբերմունք մասնագիտական գործունեության ընտրության ոլորտների նկատմամբ:

Երաժշտական կրթության և դաստիարակության առանձնահատկությունը, որը բաղկացած է երաժշտական մասնագիտության վաղ զարգացումից, երաժշտական գործունեության տարբեր տեսակների մասնագիտական հմտությունների և կարողությունների տիրապետումից, հուշում է երաժշտական տարբեր մասնագիտությունների գծով աշակերտների մասնագիտական կողմնորոշման անհրաժեշտության

մասին: Սա պայմաններ է ստեղծում երաժշտական արվեստի տարբեր ոլորտներում սովորողների վաղ ինքնորոշման համար:

Երաժշտական և մանկավարժական գրականության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երաժշտական կրթության առնչությամբ մասնագիտական կողմնորոշման հարցերը բովանդակային և մեթոդական առումով մշակված չեն: Միևնույն ժամանակ, մասնագիտական երաժշտական կրթության առկա համակարգում առկա բացասական կողմերի գիտակցումը. դրա հետ տեխնոլոգիական ուղղվածությունը, երաժշտական առարկաների ուսումնասիրվող ուսումնական նյութի սահմանափակ առարկայական բովանդակային տարածքը, դրանց անմիաբանությունը երաժշտության այլ առարկաների հետ: ցիկլը, ինչպես նաև անբավարար ուշադրությունը երաժշտագիտության նկատմամբ աշակերտների մոտիվացիայի և հետաքրքրության ձևավորման և երաժշտական մասնագիտության ընտրության և զարգացման նկատմամբ գիտակցված վերաբերմունքի խնդիրներին,

Երաժշտական մանկավարժության հետ կապված մասնագիտական կողմնորոշումը մեր կողմից դիտվում է որպես երաժշտական կրթության և դաստիարակության հատուկ կազմակերպված համակարգ, որն ուղղված է երաժշտական մասնագիտության ընտրության և զարգացման նկատմամբ աշակերտների արժեքային-մոտիվացիոն վերաբերմունքի կառուցվածքի վաղ թարմացմանն ու շտկմանը, ակտիվացմանը: Նրանց անձնական ինքնորոշումը և երաժշտական արվեստի տարբեր ոլորտներում մասնագիտական զարգացման խթանում: Այն ներառում է աշակերտի մոտ մասնագիտական երաժշտական գործունեության նկատմամբ վաղ վերաբերմունքի ձևավորում՝ որպես երաժշտական մասնագիտության գիտակցված ընտրության կայուն մոտիվացնող պատրաստակամություն, որն արտահայտվում է իր մասնագիտական կոչման վերաբերյալ հուզականորեն գունավոր համոզմունքի միջոցով:

Երաժշտական կրթության մեջ մասնագիտական կողմնորոշման մանկավարժական հնարավորությունները կայանում են երաժշտական առարկաների ինտեգրված կարիերայի ուղղորդման փոխազդեցության և երաժշտի մասնագիտության ընտրության նկատմամբ աշակերտների արժեքային-մոտիվացիոն վերաբերմունքի կառուցվածքի վաղ ակտուալացման մեջ: Մասնագիտական երաժշտական կրթության տարբեր բաղադրիչների և մակարդակների ինտեգրումն ապահովում է ապագա մասնագետի անձի համակողմանի զարգացումը և երաժշտական արվեստի տարբեր ոլորտներում նրա ինքնորոշման իրականացումը, ինչը հնարավորություն է տալիս աշակերտներին ինքնուրույն ընտրել իրենց մասնագիտական ուղղությունները և երաժշտական զարգացումը և որոշում է նրանց անձնական և մասնագիտական ինքնորոշման հաջողությունն ու օգտակարությունը երաժշտական արվեստում:

Կարիերայի ուղղորդման նպատակաուղղված աշխատանքը ապահովում է աշակերտների ինքնորոշման ձևավորումը իրենց երաժշտական գործունեության տարբեր տեսակներում հետևյալ

հաջորդականությամբ՝ գիտելիք, իրազեկում, ձևավորում, փորձարկում, մասնագիտության ընտրության վերաբերյալ որոշումների կայացում, ստեղծագործական ինքնիրացում:

Երաժշտական արվեստում ինքնորոշումը, որն ուղղված է նրա հայեցակարգային և իմաստային միասնությանը և երաժշտական գործունեության գործընթացում անձնական իմաստ ստանալուն, ընթանում է որպես անձնական և մասնագիտական զարգացման և ինքնիրացման մոդելի կառուցում, որը հիմնված է ճանաչողության և գաղափարների ներհայեցիկ վերլուծության վրա: իր մասին մասնագիտական երաժշտական գործունեության տարբեր տեսակներում. Այն դրսևորվում է երեք մակարդակներում՝ ցրված, որոնողական և անձնական-մասնագիտական: Երաժշտական արվեստում աշակերտների ինքնորոշումը նպատակաուղղված ձևավորելու ունակ մանկավարժական գործիքը մասնագիտական կողմնորոշումն է:

Առանձնացնենք մանկավարժի մասնագիտական կողմնորոշման աշխատանքի հետևյալ խնդիրները.

- Դպրոցականի հաջող ուսուցման, դաստիարակության, անձի զարգացման, նրա սոցիալականացման և մասնագիտական կայացման համար սոցիալ-մանկավարժական պայմանների ապահովում:
- Դպրոցականի ինքնակրթության, ինքնադաստիարակության, ինքնահիրացման, ապագա աշխատողների և մասնագետների ինքնագիտակցության ձևավորման հարցում օգնության ցուցաբերում:
- Դպրոցականի անհատական հետաքրքրությունների և պահանջմունքների զարգացում համապատասխան նրանց սոցիալական կայացմանը, բարոյականության, պատասխանատվության զարգացմանը:

<u>Աշխատանք հիմնական դպրոցականների հետ</u>

Ախտորոշիչ գործունեություն.

- Սովորողների հետաքրքրությունների և հակումների բացահայտում և ուսումնասիրում
- Խառնվածքի և բնավորության ուսումնասիրում
- ՈՒսումնական գործունեության, վարքի, հաղորդակցման դրդապատճառների բացահայտում
- Վարքում, հաղորդակցման մեջ բացասական որակների և թերությունների բացահայտում
- Սովորողների դաստիարակվածության և զարգացման մակարդակի որոշում
- Սովորողների առողջական վիճակի ուսումնասիրում և հաշվի առնում

2.Խորհրդատվություն

- Պրոֆեսիոնալ հիման վրա սովորողներին մասնագիտական կողմնորոշման հարցում հատուկ օգնության ցուցաբերում

- Տեղեկատվական-ուղեցույցային խորհրդատվություն

3.Պրոֆտեղեկացում

- Աշխատանքի շուկայում իրադրության մասին պահանջված մասնագիտություններ, ոչ պահանջարկ ունեցող մասնագիտացումներ
- Կրթության համակարգի, ընդունելության կանոնների, նախապատրաստական կուրսերի մասին տեղեկացում
- ՈՒսումնական հաստատությունների, ընդունելության կանոնների, նախորդ տարվա տվյալների (կոնկուրս, ռեյտինգ), ընթացող տարվա ընդունելության առանձնահատկությունների մասի տեղեկացում

4.Կազմակերպչական գործունեություն

- Պրոֆկողմնորոշման թեմատիկայով միջոցառումների կազմակերպում, <<պրոֆկողմնորոշման շաբաթ>>, <<պրոֆկողմնորոշման օրեր>>, զրույցներ էքսկուրսիաներ, հանդիպում տարբեր մասնագիտության ներկայացուցիչների հետ
- Դպրոցականների խելամիտ ժամանցի կազմակերպում սպորտային և ստեղծագործական խմբակներ, դպրոցականների ստեղծագործական ընդունակությունների զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծում

Դպրոցականների հետ տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ձևերը.

- Մասնագիտական ինքնորոշման հարցով անհատական և խմբային կոնսուլտացիաներ
  - Պրոֆեսիոգրաֆիական դասեր
  - Զրույցներ, դասաժամեր մասնագիտական կողմնորոշման թեմատիկայով
  - Տարբեր մասնագիտության ներկայացուցիչների հետ հանդիպում
  - Վարպետության մրցույթներ
- Էքսկուրսիաներ տարբեր ձեռնարկություններ և ուսումնական հաստատություններ
  - Դպրոցականներին ներգրավվում օլիմպիադաներում, կոնֆերենցիաներում
- Դպրոցականներին ներգրավվում մասնագիտական կողմնորոշման աշխատանքում, ստենդների, պլակատների ձևավորում:

<u>Աշխատանքը ծնողների հետ.</u> Ծնողները պետք է հասկանան մասնագիտական խորհրդատվության դերն ու նշանակությունը, անհրաժեշտությունը: Մասնագիտության ընտրության հարցում հաճախ լինում է նաև, որ ծնողների և երեխաների կարծիքները չեն համընկնում: Երեխայի մասնագիտության ընտրության նկատմամբ ծնողների վերաբերմունքը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. [3]

-ընտանիքի դիրքորոշումը այս կամ այն մասնագիտության կամ աշխատանքային գործունեության նկատմամբ

-ընտանիքի սոցիալ-հոգեբանական, բարոյահոգեբանական մթնոլորտը, ներքին հարաբերությունները

-մանկավարժական և հատկապես մասնագիտական կողմնորոշման գծով գրագիտության մակարդակը

Ծնողների և մանկավարժի համագործակցությունը ներառում է 2 ուղղություն. հոգեբանամանկավարժական լուսավորություն և ծնողների ներգրավում ուսումնադաստիարակչական պրոցես:

Հոգեբանամանկավարժական լուսավորությունը մասնագիտական կողմնորոշման շրջանակներում ենթադրում է ընտանիքի հետ աշխատանքի հետևյալ ձևերի կազմակերպում.

- Ծնողական ժողովներ, դասախոսություններ,կոնֆերենցիաներ
- Երեխաների մասնագիտական կողմնորոշման հարցերով թեմատիկ զրույցներ
- Տեղեկատվական-ուղեցույցային կոնսուլտացիաներ

Սրանցից ավանդական են խնողական ժողովները, որոնց ընթացքում քննարկվում են հետևյալ թեմաները.

- Ընտանիքի դերը ավագ դպրոցականի մասնագիտական ինքնորոշման հարցում
- Մասնագիտական կրթության համակարգը
- Կրթության ստացման եղանակները
- Մասնագիտության ընտրության սխալները
- Մասնագիտական ընտրության ժամանակ առողջական վիճակի հաշվի առնում
- Աշխատանքի շուկան և մասնագիտական կրթության նրա պահանջները

2. Ծնողները կարող են օգնություն ցուցաբերել՝ մասնակցելով մասնագիտական կողմնորոշման միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը, երեխաների և նրանց ծնողների ստեղծագործության համատեղ օրերին, պրեֆեսիոգրաֆիական դասերին, էքսկուրսիաներին և այլն: Կարելի նրանց ընդգրկել նաև այն դասաժամերին, որոնք կարող են կապված լինել հենց ծնողների մասնագիտության, հետաքրքրությունների, նաև այն կազմակերպությունների հետ, որոնցում հրանք աշխատում են: [4]

Մասնագիտական կողմնորոշման գործունեության սոցիալ-մանկավարժական սկզբունքներն ու մեթոդները Սկզբունքները: Սկզբունք լատիներենից թարգմանաբար նշանակում է հիմք, հիմնական կանոն, վարքին կամ գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջ: Մասնագիտական կողմնորոշման սկզբունքներն այնպիսի պահանջներ են, որոնք ապահովում են նրա արդյունավետ

իրագործումը: Դրանք միաժամանակ այնպիսի էլեկտրային պահանջներ են, որոնք դուրս են բերվել մասնագիտական կողմնորոշման օպտիմալ կազմակերպման օրինաչափությունից: Աշխատանքային գործունեության ցանկացած ոլորտում կարևոր է որոշ սկզբունքների հետևելը: Աշխատանքը պետք է կառուցել ելնելով ոչ միայն կոնկրետ և լավ արդյունք ստանալու հանգամանքից, այլ նաև համամարդկային արժեքներից: Առանձնացնենք սկզբունքների հետևյալ խմբերը.

Ընդհանուր մանկավարժական սկզբունքներ:

Մասնագիտական կողմորոշման կապը կյանքի, պրակտիկայի հետ: Ենթադրում է պատանուն օգնություն ցուցաբերել ապագա մասնագիտության ընտրության հարցում երկրի աշխատանքային շուկայի պահանջներին, գիտատեխնիկական առաջընթացի պայմաններին համապատասխան:

Հաջորդականություն և համակարգվածություն: Ենթադրում է, որ մասնագիտական կողմնորոշման աշխատանքները անցկացվեն սկսած կրտսեր դպրոցական տարիքից, և հաջորդական ձևով՝ հաշվի առնելով փուլային կառուցվածքը:

Տարիքային առանձնահատկությունների հաշվի առնում: Սա հնարավորություն է տալիս մասնագիտական ինքնորոշում իրականացնել աստիճանաբար, համապատասխան դպրոցականի տարիքին:

Դպրոցի, ընտանիքի, ուսումնական հաստատության միջև փոխադարձ կապի սկզբունք: Ենթադրում է մասնագիտական կողմնորոշման ժամանակ իրականացնել համագործակցված աշխատանք միմյանց փոխլրացնող կողմերի միջև: [5]

Կոնկրետ մասնագիտական կողմնորոշման սկզբունքներ:

Մասնագիտական կողմնորոշման կոմպլեքսայնություն: Ենթադրում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքի կազմակերպումը սոցիալ-տնտեսական, հոգեֆիզիոլոգիական, մանկավարժական, հոգեբանական, բժշկական, իրավական ուղղություններով, ինչը հնարավորություն է տալիս պատանուն համակողմանիորեն նախապատրաստել մասնագիտության ընտրության համար:

Մասնագիտական ինքնորոշման ինքնուրույնության սկզբունք: Էությունը կայանում է հետևյալում. հետաքրքրություններն ու ընդունակությունները ի հայտ բերելուց հետո, համագործակցելով ընտանիքի, դպրոցի հետ, յուրաքանչյուրին խորհուրդ է տրվում իրեն համապատասխան մասնագիտություն: Մանկավարժական ղեկավարումն ու վերահսկումը պետք է զբաղեցնեն իրենց տեղը, այնուամենայնիվ մասնագիտության վերջնական ընտրություն կատարելու իրավունքը աշակերտինն է:

Մասնագիտական կողմանորոշման գիտակցվածության սկզբունք: Սա ենթադրում է մասնագիտության լավ իմացություն. ինչ պետք է իմանա և կատարի մարդն այդ մասնագիտության շրջանակներում, ինչպիսի պահանջներ են ներկայացվելու իրեն, ինչպիսին են աշխատանքի

պայմանները, վարձատրությունը, զարգացման հեռանկարները, հնարավորության դեպքում փորձարկի իրեն այդ մասնագիտության ոլորտում: [6]

Հասանելիություն: Անհրաժեշտ է հիմնական դպրոցականին խորապես ծանոթացնել մասնագիտությունների աշխարհին, մասնագիտության կողմից մարդուն ներկայացվող պահանջներին, մասնագիտության ձեռք բերման ուղիներին, մասնագիտական աճի հեռանկարներին, աշխատավարձի չափին, կենսական կենցաղային պայմաններին:

Գիտականությունը և հավաստիությունը: Ենթադրում է օբյեկտիվություն, մասնագիտական կրթությունը և աշխատանքը բնութագրող փաստերի, գնահատականների, թվերի հստակություն, ինչպես նաև մասնագիտության մեջ առկա դժվարությունների, վտանգների և ռիսկի մասին տեղեկացում:

Դպրոցականի կողմից ինքն իրեն օբյեկտիվ գնահատելու սկզբունք: Իր հնարավորությունները որևէ մասնագիտության համար օբյեկտիվ գնահատելու համար պատանին պետք է ծանոթանա տվյալ մասնագիտության պրոֆեսիոգրամի հետ, որտեղ նշված են այն պահանջները, որը ներկայացնում է մասնագիտությունը մարդուն, նրա հոգեկանին, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին, առողջական վիճակին: [7]

Մեթոդները: Մանկավարժը մասնագիտական կողմնորոշման գործունեությունը իրականացնում մի շարք մեթոդներով:

Դիտում: Սա կատարվում է նախապես մշակված պլանով: Անձնավորությունը դիտվում է նրա գործունեության և շրջապատի հետ փոխհարաբերությունների շրջանակում: Դիտման օբյեկտը չպետք է զգա, որ դիտում են իրեն ինչն էլ կբացառի արհեստականությունը նրա վարքում և գործողություններում: Դիտման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել անձի, վարքի, գործողությունների, դատողությունների, արտահայտությունների վրա, այնուհետև վերլուծել այդ ամենը, եզրակացություն կազմել և կատարել եզրահանգումներ: Դիտման միջոցով հեշտությամբ կարելի է բացահայտել սովորողի ուսումնական և մասնագիտական հետաքրքրությունները, հակումները, կարողությունները, հմտությունները,բարոյական արժեքները, բնավորությունը:

Մեթոդը մեր խնդրի տեսակյունից արժեքավոր է այնքանով, որ հնարավորություն է տալիս պատկերացում կազմել սովորողների մասնագիտական մտադրության, հետաքրքրությունների, հակումների, ընդունակությունների մասին: Դիտումը պետք է անց կացնել դպրոցական գործունեության տարբեր պայմաններում՝ դաս, դասամիջոց, լաբորատորիա: [8]

Զրույց: Պետք է անցկացնել նախապես մշակված պլանով, լինեն նախօրոք կազմված հարցեր: Մասնագիտական կողմնորոշման մասին զրույցը անց է կացվում աշակերտների, ծնողների և ուսուցիչների հետ: Զրույցի արդյունքում կարող է պարզվել աշակերտի հետաքրքրությունները,

մասնագիտական մտադրությունները կենսական պլանները, դրանց հիմքում ընկած դրդապատճառները, մասնագիտության ընտրության հարցում դիրքորոշումները: Տարբեր հարցադրումների միջոցով անհրաժեշտ է պարզել ավագ դպրոցականը, հատկապես, որ ուսումնական առարկաներով է հետաքրքրվում, որոնք են նրա համար արժեքավոր, պետական:

Ծնողների հետ զրույցը լրացուցիչ ինֆորմացիա է տալիս աշակերտի մասին. ու՞մ է նմանակում, ո՞ր մասնագիտության մասին է հաճախակի խոսում, ինչպե՞ս է վերաբերվում ծնողների մասնագիտությանը և մտադիր է արդյո՞ք ընտրել այն:

Առարկայական ուսուցիչների հետ մանկավարժի զրույցը ևս արդյունավետ է, որի ընթացքում ստացվում են բավականին տեղեկություն աշակերտի դրսևորումների, առաջադիմության, ակտիվության մասին:

Հարցում, անկետավորում: Անկետայում ներառված հարցերը պետք է լինեն հստակ ու հասկանալի: Այն անց է կացվում ոչ միայն աշակերտների, այլ նաև ծնողների հետ: Դպրոցականների ուսումնասիրման համար օգտագործվում են տարբեր անկետաներ՝ կախված հետազոտության փուլից, նպատակից, փորձարկվողի տարիքից և այլն: Օրինակ՝ սկզբնական շրջանում նպատակահարմար է կիրառել բաց տիպի անկետաներ:

Հարցման ձև են հանդիսանում նաև գրավոր շարադրությունները ու վարժությունները:

Թեստ: Կան մասնագիտական պիտանելիության որոշման հատուկ թեստեր, որոնք պարզում են, թե անձը իր ընդունակություններով և առանձնահատկություններով որքանով է համապատասխանում տվյալ մասնագիտությանը: Թեստերի միջոցով անձի մոտ կարող ենք պարզել նաև այնպիսի առանձին որակների առկայությունը, որը որպես պահանջ նրան է ներկայացնում կոնկրետ մասնագիտությունը կամ ընդհակառակը՝ մասնագետի մոտ այդ որակը չի խրախուսվում: [9]

Անկախ բնութագրերի հավաքագրման մեթոդ: Սա այն բնութագրերի հավաքագրման մեթոդն է, որը տրվում է միևնույն անձի մասին նրան ճանաչող անձանց (ծնողներ, մանկավարժներ, ընկերներ, բժիշկներ, մարժիչներ) կողմից և իրարից անկախ: Այնուհետև այդ ամենը համադրվում և վեր է լուծվում, դուրս է բերվում հակասությունները, կատարվում ընդհանրացումներ: Այս մեթոդի կիրառման ժամանակ սուբյեկտիվությունը նվազում է՝ կապված դպրոցականի հետաքրքրությունների, հակվածությունների, ընդունակությունների, այս կամ այն մասնագիտական գործունեության համար պիտանելիության գնահատման հետ:

Մանկավարժական էքսպերիմենտ: Անց է կացվում ինչպես առանձին աշակերտների, այնպես էլ ոչ մեծ թվով աշակերտների խմբի հետ: Լինում է բնական ուսումնական, դաստիարակչական պրոցեսի բնականոն պայմաններում և լաբորատոր հատուկ լաբորատորիաներում:

Աշխարհում կան բազմաթիվ ու բազմազան մասնագիտություններ, որոնք տարածվում են մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառների վրա: Այդ բազմազանությունը հասարակության, գիտության, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց անընդհատ փոխվում է: Պարզ է դառնում, թե որքան կարևոր է մասնագիտության ճիշտ բնութագրումը, նրա էական առանձնահատկությունների առանձնացումը, ինչը հնարավորություն է տալիս մասնագիտություն ընտրող մարդուն հասկանալ, թե որքանով է այն համապատասխանում իրեն:

Մասնագիտության հետ տեսական բնույթի ծանոթացումը պրոֆեսիոգրամների օգնությամբ: Պրոֆեսիոգրամները կազմվում են մասնագիտության վերլուծության հիման վրա, ներառում է իր մեր մասնագիտության ընդհանուր բնութագրեր, և այն պահանջները, որ ներկայացվում է մասնագետին: Պրոֆեսիոգրամը կոնկրետ մասնագիտության սոցիալ-տնտեսական, պատմական, սանիտարահիգենիկ, ֆիզիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական յուրահատկությունների բնութագիրն է այն պահանջների տեսանկյունից, որոնք ներկայացվում են տվյալ մասնագետին:

Հիմնական դպրոցականների հետ անց կացվող հետազոտության նպատակն է պարզել, թե որքանով է նրանց մոտ ձևավորված մասնագիտական մտադրությունը և ինչ գործոններով (ընտանիք, ընկերներ, արժեքային համակարգ և այլն) է պայմանավորված

Այսպիսով ստացվում է, որ պրոֆեսիոգրամը այնպիսի մասնագետների գործունեության արդյունք է, որոնք են սոցիոլոգներ, տնտեսագետներ, բժիշկներ ֆիզիոլոգներ, հոգեբաններ, մանկավարժներ և հենց տվյալ մասնագիտության ներկայացուցիչը:

Ե. Ա. Կլիմովը ճշել է, որ պրոֆեսիոգրաֆիական նյութերի մասնագիտական մշակումը պետք է կատարվի այնպես, որ նրանք ունենան ներգործող որոշակի ազդեցություն, որ մասնագիտության վերաբերյալ տեղեկությունները լինեն գրավիչ, որ երիտասարդները դրանց հետ ծանոթանալուց հետո ցանկություն հայտնեն զբաղվելու այդ մասնագիտությամբ: Սա պրոբլեմի զուտ մանկավարժական կողմն է:

Վ. Լ. Մարիշչուկը առաջարկել է պրոֆեսիոգրամի հետևյալ կառուցվածքը.

1. նկարագրական մաս, որի մեջ մտնում է մասնագիտության բնորոշումը, սոցիալ-տնտեսական նշանակությունը, զարգացման հեռանկարները, աշխատանքի ռեժիմը, սանիտարահիգենիկ պայմանների բնութագրիչները և այլն

2. վերլուծական-համադրական մաս, բնութագրվում է աշխատանքային պրոցեսի կարևոր գործողությունները, շարժողական գործողությունները, խաթարումները

3. փսիխոգրամա, ընդգրկում է մասնագիտության հոգեբանական տարրերի գնահատումը, աշխատանքային պրոցեսի համար կարևորություն ներկայացնող հոգեբնախոսական ֆունկցիաները, վերլուծիչ համակարգերը, հոգեբանական բնույթի հակացուցումները

Ե. Ս. Ռոմանովան իր "99 տարածված մասնագիտություններ" գրքում ներկայացնում է պրոֆեսիոգրամի հետևյալ կառուցվածքը (նմուշը տե՛ս հավելված 1-ում).

1. Մասնագիտության դասակարգման բարտ
2. Գործունեության գերակշռող տեսակները
3. Որակներ, որոնք ապահովում են իրականացվող մասնագիտական գործունեության հաջողությունը
4. Որակներ, որոնք խոչընդոտում են արդյունավետ մասնագիտական գործունեությանը
5. Մասնագիտական գիտելիքների կիրառման բնագավառները
6. Մասնագիտության պատմությունը
7. Մի քանի մասնագիտություններ , որոնք ևս համապատասխանում են անձնավորության նման տիպով մարդուն
8. ՈՒսումնական հաստատությունները, որտեղ կարելի է ստանալ համապատասխան կրթություն:

Հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա մեր փորձարկվող աշակերտներին կարող ենք պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի.

1. Ընտրել են իրենց համապատասխան մասնագիտություն և հաճույքով սովորում են:
2. Ընտրել են իրենց ցանկացած մասնագիտությունը, բայց հետագայում փոխվել է մասնագիտության նկատմամբ դրական վերաբերմունքը:
3. Պատահական են ընտրել մասնագիտությունը, ճիշտ պատկերացում չեն ունեցել դրա մասին, բայց հիմա այն ճանաչելուց հետո սիրում են, հաճույքով են սովորում և պատրաստ են աշխատեն այդ ոլորտում: Հնարավոր է նաև, որ ձգտում այլ մասնագիտություն ևս ունենալ:
4. Պատահական են ընտրել իրենց մասնագիտությունը և այն իրենց համապատասխան չեն համարում և չեն էլ սիրում, սրա մեջ մտնում են մարդիկ, որոնք պատրաստվում են աշխատել ամեն դեպքում և որոնք չեն պատրաստվում աշխատել, մտածում են այլ մասնագիտության մեջ կայանալու մասին:

Ստացվում է, որ կան պատանիներ, որոնք դեռ չեն կայացրել իրենց մասնագիտական ընտրությունը: Ըստ նրանց, դրա պատճառը կարող է լինել մասնագիտությունների բազմազանության աշխարհում չկողմնորոշվելը: Վերջինս հենց մասնագիտական կողմնորոշման հիմնական խնդիրներից մեկն է: Նրանք

կարևոր են համարում իրենց ծնողների կարծիքը իրենց մասնագիտությունը ընտրելիս: Ավագ դպրոցականները իրենց մասնագիտական կայացման առաջին հիմնական քայլերն են կամքը, աշխատասիրությունը, սեփական ուժերի նկատմամբ ինքնավստահությունը: [10]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն և կատարելով որոշակի հետազոտություն՝ ևս մեկ անգամ ընդգծում ենք մասնագիտական կողնորոշման անհրաժեշտությունը և դրա բացակայության պայմաններում հնարավոր բացասական հետևանքները ինչպես անձի, այնպես էլ հասարակության համար: Մանկավարժը իր գործունեությունը տարածում է բոլոր այն ոլորտներում, ուր առկա է սոցիալականացման այս կամ այն խնդիրը և իր աշխատանքներով նպաստում է դրանց հարթմանը, կարգավորում՝ ապահովելով նորմալ ընթացք: Ավագ դպրոցական տարիքում

սոցիալականացման կարևոր ասպեկտ է համարվում մասնագիտական ինքնորոշումը, որը անպայմանորեն կարիք ունի մանկավարժական ներգործության, ղեկավարման և վերահսկման, քանի որ պատանի դեռ չունի այն փորձն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մասնագիտության հիմնավորված և գիտակցված ընտրություն կատարելու համար: Այսպիսով՝

Մանկավարժը իր մասնագիտական կողմնորոշման աշխատանքների միջոցով նպաստում է պատանիների սոցիալականացմանը, Նա զբաղվում է մասնագիտական կողմնորոշմամբ, նպաստում է պատանիների ճիշտ մասնագիտական ինքնորոշմանը՝ իրականացնելով լուսավորչական, ախտորոշիչ, խորհրդատվական, դաստիարակչական աշխատանքներ, Համակարգում է ընտանիքի, այլ շահագրգռված անձանց, բոլոր այն մասնագետների, կազմակերպությունների, հաստատությունների ներուժը, որոնք կարող են իրենց մասնակցություն ունենալ պատանիների մասնագիտական ինքնորոշումը ուղղորդելու մեջ, Բացահայտում է պատանիների ներքին հնարավորություններն ու ընդունակությունները, նպաստում նրանց ակտիվությանը իրենց իսկ մասնագիտության կողմնորոշման մեջ:

Մասնագիտական կողմնորոշման խնդիրը դուրս է գալիս անձի շրջանակներից և իր վրա պետք է հրավիրի ամբողջ հասարակության՝ նրա տարբեր ինստիտուտների, մարմինների, կազմակերպությունների ուշադրությունը: Այն արդյունավետորեն իրականացնելու համար պետք է գործի դրվի կրթական համակարգի օրենսդրական դաշտը: Պետք է նորովի մշակվեն ուսումնական հաստատությունների մասնագիտությունների ցանկը, պահանջվող մասնագետների քանակը, որոնք անպայմանորեն պետք է պատասխանեն աշխատաշուկայի պահանջներին և օժտված լինեն ճկունությամբ:

Յուրաքանչյուր մասնագիտական ուսումնական հաստատություն, բարձրագույն, թե միջին, պետք է կազմակերպի <<բաց դռների>> օրեր, որոնց ընթացքում կազմակերպվում է ավագ-դպրոցականների այցելություններ այդ հաստատություններ՝ նրանց ներկայացնելով հատատության շրջանակներում ուսուցանվող մասնագիտությունները: Սա կնպաստի նրանց մասնագիտական լուսավորությանը և դպրոց-մասնագիտական ուսումնական հաստատություն կապի ապահովմանը: Մասնագիտական կողմնորոշման կազմակերպումը ապահովում է մասնագիտության հնարավորինս ճիշտ ընտրությունը, որը համապատասխանում է մարդու ընդունակություններին, հոգեֆիզիոլոգիական, հոգեբանական առանձնահատկություններին, բխում է նրա հետաքրքրություններից և նախասիրություններից: Այս պայմանների դեպքում անձը սիրով է կատարում իր գործը, ինչն ապահովում է բարձր որակով և արդյունավետ աշխատանքը, որն էլ իր հերթին կարող է նպաստել տնտեսության զարգացմանը և բխում է հասարակական շահերից: Բացի

հասարակական նշանակությունից այն ունի նաև անձնային նշանակություն. Մարդը բավարարված է լինում իր աշխատանքով, ունի բարձր ինքնագնահատական, ինքնավստահություն, հեղինակություն, կարողանում է արդյունավետ կառուցել իր հարաբերությունները շրջապատի հետ: Ուստ, անհրաժեշտ է բացառել պատահական, հանգամանքների բերումով մասնագիտության ընտրությունը:

Մենք կցանկանայիք, որ մեծ ուշադրություն դարձվեր այս հարցին: Չէ՞ որ սա է որոշում մարդու կյանքի ուղղին, նրա գործունեությունը, նրա ինքնաբավարարվածության մակարդակը, նրա աշխատանքի որակը, հաջողություններն ու զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Ա. Լալայան, Դպրոցականի պրոֆեսիոնալ կողմնորոշումն ընտանիքում, Երևան, 1979
2. Ա. Ա. Լալայան, Դպրոցը և պրոֆեսիոնալ կողմնորոշումը, Երևան, 1971
3. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, /Ա. Վ. Պետրովսկու խմբ./, Երևան, 1977
4. Жуковская В. И., Изучения личности школьника в связи с выборам профессии, Минск, 1979
5. Климов А. Е., Как выбирать профессию. Москва, 1984
6. Климов А. Е., Путь в профессию, Ленинград, 1974
7. Климов А. Е., Школа… а дальше?, Ленинград, 1971
8. Кон И.С., Психология юношеского возраста, Москва, 1979
9. Романова Е. С., 99 популярных профессий. Психологический анализ и профессиограммы. 2-е изд. СПБ, 2007
10. Профессиональная ориентация в высшей школе, /Редкол. Н. Н. Чистяков и